

# Գրական Թերթ

ISSN 1829- 1627

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԲԱԹԱԹԵՐԹ \* ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1932-ԻՑ

Տ ա ա գ ր վ ու մ է չ չ Մ շ ա կ ու լ յ թ ի ն ա խ ա ր ա ր ու լ յ ա ն ա ջ ա կ ց ու լ յ ա մ ք



ՀՈՒՓՄԻՄԷ

Պատերազմը հոգու երկրաշարժ է, բուրգից մինչև ստորոտ: Նրա փլատակները մնում են որպես ավերակների վավերագրություն և ոչ մի շաղախից չեն ամբողջանում: Դաշվում են պատմության մեջ, մնում են ձայնով պտտվող աղետալի անիվի ճշմարտություն: Անգամ խաղաղության ոգեկոչումների ոլորաններում գլխատված կյանքերը աշտարակվում են, դառնում մահերի հուշարձաններ, որ աղաղակ են:

- Ապրողներ, հիշե՛ք մեզ:

Պատերազմը՝ որպես աղետաբեր, շրջանառու վիճակ, պիտի դուրս մնա աշխարհի բոլոր բառարաններից և լինի անթարգմանելի, սակայն դառնում է ժամանակների ամենաարդիական սպառնալիքն ու պարտադրանքը: Պատմությունները կրկնություններ ունեն, թեպետ փոխվում է նրանց ձևն ու բովանդակային կառուցվածքը: Այս անգամ էլ հայ զինվորը գնաց այդ մեծ աղետին ընդառաջ: Արցախի պաշտպանությունը տարավ նրան աներևակայելի սխրանքների: Պայքարը եղավ հերոսական, բայց հաղթանակ բառից մեզ մնաց միայն թանաքը և այն տեսլականը, որ ազգային ոգին անպարտելի է:

\*\*\*

Նոր զինատեսակները հերքում են հնի ներկայությունը, և շարունակվում է կյանքաորսի անհերքելի ընթացքը, առավել դաժան ու իրական, առավել նոր ու հակամարդկային, առավել նգովյալ ու չարաբաստիկ: Երկաթե թռչունների հոնդունը մահվան իր սև ծածկույթով ծածկեց ճակատագրային գույները, որից այն կողմ անայություն է...

## ԿԱՐՄԻՐ ԳԾԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ

\*\*\*

Պատերազմը ժամանակի ամենավերիչ ու անբուժելի քաղցկեղն է: Այն հաճախ հայտնվում է երկրի մարմնի մեջ, որը կան հաղթահարվում է, կան՝ ոչ, իսկ վերակենդանացման հույսը արդեն ապագային է մնում: Այս անգամ էլ Արցախի գոյամարտի սև ուղտը քառասունչորս օր չոքեց մեր տան դռանը՝ մեկ անգամ ևս հիշեցնելով, որ հայը պիտի տեր կանգնի իր երկրի ամեն մի թուփ ու քարին, ականջալուր լինի արմատների կանչին, որոնց ճյուղատարածության մեջ է վաղվա կանաչությունը և ազգի ծաղիկը, իսկ արմատներում ննջում են նախնիների թանկացող հիշատակները: Կրակը և հրթիռակոծության տեղատարափները, ֆոսֆորային անձրևները, երկաթե թռչունների երամները հաստատեցին, որ կերտվում է հերոսության մի նոր ճամփա, ոչ նման նախորդներին, ուր ամեն մի կյանք պիտի աստղանար և բարձունքից դեպի երկիր նայեր որպես հսկող, անթարթ աչք:

\*\*\*

Հեռացողները պատմության մեջ դառնում են հերոսացումների էջեր՝ ի պահ եկող սերունդների: Այս պատերազմը գլխատեց ջահելական մի ողջ բանակ, նրանց կանաչությունը և հատունների վաստակած ինքնությունները և մտավոր ներուժը: Հաղթանակը անգամ ցավոտ կլինի, կորուստների գնով, պարտությունը՝ անշրջանցելի դատավճիռ էր: Պարտություն արձանագրվեց, և լուսանցքներում մնացին մեր պայծառատեսության միֆերը:

\*\*\*

Ինձ համար առավել ևս պարզացավ է հիմա պատերազմի արյունոտ դեմքը: Զոհերի գերակշիռ մասը ունեին հեռանկարային խոստումներ գիտության հանդեպ, ուսանողներ էին, ֆիզիկոսներ, տնտեսագետներ, ստեղծագործող ներուժով ջահելություն, արվեստով աշխարհին նայող անհատներ:

Հայի առողջ սերնացուն կորավ արյան լճակներում, ծլարձակում չի լինի...

Այս գոյամարտում չպարտվեց զինվորը: Նրա հերոսական ոգին աչքի փոխվեց: Պայքարեցին մինչև ամենաբարձր սանդղակը: Աներևակայելի քայլերի գնացին: Կարողացան շատերը իրենց մոտ պահել զրոյական ական՝ չգերեվարվելու համար, չհանձնված մահը համարելով պատիվ: Ռազմապարս ու երգը ուղեկցեցին նրան: Ծոցագրպանում զինվորը պահեց իր համար թանկ լուսանկարներն ու սրբապատկեր, պայծառությամբ ու երագով նայեց վաղվա աչքերի մեջ:

Ավերակների տակ մնացին ճակատագրերի աստղահանդեսները:

Մանկության մուրակը լքեցին երեխաները: Նրանք խաղալիքների հանգույն հարազատների ցավի բեռներն ուսեցին:

Ավերումի մուրճը սև թղթի հանգույն արյունոտ ու անջնջելի էջեր թողեց պատմության անդաստանում, որ կրակը ծխի փոխվի:

\*\*\*

Որդեկորույս մայրերի զուսպ, լուռ, աներևակայելի մեծ ու անճիչ ողբերգությունը, սիրելիների որբացումը, հարազատների ցավի աղը պատերազմի մատուցած ծանր սկուտեղն էր, երբ արցունքների լճերի մեջ կորչում էր հարազատին նորից հանդիպելու հույսը, և հեռացողը զինվորագրվում էր անհայտ, տիեզերական մի նոր աշխարհի համար, գնում է անվերադարձ, դառնում երկնային բնակիչ, որ աստղերը շատանան, և մենք միշտ վեր նայենք:

Նրանց հետագծից մնում է կարտը, չապաքինվող այդ հիվանդությունը, որը գնալով թունդանում է հնօրյա գինու պես՝ հոսելով երակներից դեպի սիրտը:

\*\*\*

2020 թվի սեպտեմբերի 27-ը անջնջելի մնաց մեր իրողության մեջ, դարձավ մաքառումի անմխիթար էջ, երբ թշնամին իր անողորմ ձեռագրով նորից ու կրկին դրեց պատերազմի սկիզբը, ու մենք չխուսանավեցինք: Եղավ թվաբանական սխալ հաշվարկ ու յուրայինների դավաճա-

նություն նաև: Արդյունքում հայ զինվորը որդեգրեց իր պայքարի ուղին, մտովի հաղթանակի դրոշմ անասան պատկերացրեց, հավատաց Տիրոջ զորությանը և արդար հաղթանակի ջատագովը մնաց, հավատաց նոր նվաճումների գաղափարախոսությանը: Որդեգրեց իր հաղթանակի ճամփան, որ երկրի դարպասները ամուր պահվեն, սահմանային քարտեզը արձանագրի նվաճելի համայնապատկերներ, բայց պարտության ալիքը ջնջեց այդ երևակայելի խանդավառությունը ու էլի ետ գնաց՝ նույն ափին մոտենալու մղումով:

\*\*\*

Պատերազմը կործանարար փոթորիկ է: Գրողը, լինելով իր ժամանակի զինվորը, էլ չի կարող հեռակայել այդ դաժան իրականությունից, չդառնալ պայքարի մի մասնիկը, արդարությամբ չընդվզել մատուցվածի առաջ, չգնալ դեպի թիրախը՝ առանց գունավոր ակնոցի, իրատեսորեն: «Հերոսապատում կամ քառասունչորս օր» գիրքը իմ նվերն է նահատակ հերոսներին, պարտքի մուրհակ է, որ պիտի մարվի: Կամովին զինվորագրվեցի այս պատերազմին՝ հոգով կրելով հերոսացողների ցավոտ վերջնագրերի ռեալությունը, արկերի պայթյունները զգացի հոգով, վառողի ծծմբային հոտը մնաց պոետիկ թևերիս՝ ծանրացնելով հետագա թռիչքներին երագապատումը:

Չէի կարող չգրել:

Դեպի երկինք ճախրող հերոսական այս չուն պարտադրեց քայլել նրանց երկրային ոտնահետքերով, երբ հավատը ամենագորեղ գենքն էր, իսկ այն դաժանորեն կրակում էր անմեղության վրա:

Նրանք՝ հավատավորները, ամեն մի բջիջով սպասեցին հաղթանակին և չտեսան: Թողեցին մեզ խնկարկումը իրենց գործի ու պարտավորեցնող հիշատակի ցավը՝ որպես չճնշվող հուշադարան կամ քարե հուշարձանների ներկայություն:

\*\*\*

Ափսոս, որ շատ պատվելի անունները մնացին անհայտության մեջ,

Ս կ հ գ բ ը Է Զ 1

չստացան գնահատականի ու մեծարումի խոսքեր, բայց վստահ եմ, որ նոր երևույթներ ու հերոսացումներ դեռ կլինեն, դուրս կգան սովորներից՝ կենդանի լեզունդներ դարձած, և ռազմապատմության մեջ կարճատև գրվեն նրանց սխրանքները նույնպես:

Երբ ցավը կեղևակալում է, սպին է խոսում եղածի մասին, առանց կեղծ պայթեցիկի, ու չես կարող ոչինչով ծածկել այդ գոյությունը: Ամբողջության արյունը չի կորչում, խառնվում է եկվորների երակներին, որ ասքը շարունակելի լինի:

\*\*\*

Հերոսների այս բաց թանգարանում ոսկետառ գրվող քաջագունների ներկայությունը կա: Մահվան աշտարակը հեռվից ավելի վերձիգ է երևում: Այն սերունդների համար լուսակիր է և օրինակ: Թիավարելով արցունքի միջով՝ ես, որպես ժամանակի վկայագիր, կփորձեմ ավի հասցնել այս ոգեղենիկ, բայց ծանր բեռը՝ ի հիշատակ նահատակների և ապրողաց: Այն հերոսացման ամփոփագիր չէ, վերջնագիր չէ, պարզապես ներառում է ինձ հասու անուններ, հարազատների վկայությամբ: Իմ ընթացքը թող չլինի կանգառ, այլ մնա չընդհատվող ներկայություն՝ իր մեջ ներառելով եղած բացթողումները, դիմապատկերների նոր վերծանումներ կգան լրացնելու իմ չասվածը: Պատերազմի մասին պիտի շատ գրվի: Այն անհատակ ծով է, գաղտնիքները՝ խորքում, որոնք ժամանակի ընթացքում մակերես դուրս գալու մղումներ կունենան: Դեռ նոր անուններ կհայտնվեն՝ ասելու. «Մենք այնտեղ եղել ենք, մեզ էլ կհիշեք»:

\*\*\*

Գրքում չկա երևակայություն, հորինված պատկերների նկարագիր, լիրիկական գեղումների գեղեցկախոսություն, իրականությունը նախազարդող վիճակ: Այն իրատեսական է, ռեալ, չընթացող ու թափանցիկ, որտեղ խոսում են ցավը ուսած մարդիկ, հարազատները: Վկայագիրները յուրային հերոսի մասին բնականորեն ու տպավորիչ անցումներով են խոսում, ինչու չէ, գուցե և ինչ-որ տեղ լինում են վերագնահատումի պահեր, բայց եղելությունը ավելի իրատեսական է ու բնական:

Հերոսների անունները, միևնույն է, անջնջելի են:

\*\*\*

Որդեգրումի իմ այս ճանապարհին՝ դանդաղ, առանց գունավորումների պտտվում է հիշողության ծանր անիվը՝ իր ներկայացնելի անունների այբբենական հաջորդականությամբ, և պարտադրում, որ մենք պարտապան մնացինք զինվորին, ում առաքելությունն էր կովել միայն, պաշտպան լինել հայրենիքին, շնորհագրելը մնալ կրակաորոտի, բայց ջբաղաքականացվել: Գիրքը իր շնչելի թթվածինը ունի, չնայած տեղ-տեղ կոկորդո սեղմվում է,

կանգ ես առնում, որ հարց տաս.  
- Ինչո՞ւ: Մի՞թե հնարավոր չէր կանգնեցնել այս մարդաորս պատերազմը, որը տաբու էր երազի ու մահվան միջև, ազոավային բոթով եկավ ու մնաց մեր երկնքում որպես մի նոր սպառնալիք:  
Պատասխանը հնչում է իմ մեջ.  
- Հնարավոր էր...

\*\*\*

Հերոսացման ճանապարհը ծանր գողգոթա է, հուշապատումը փշածածկույթ է, ստիպում է ետ նայել: Դեռ կան հաշմանդամ վիրավորներ, որոնց կյանքում պատերազմը կմնա իրական, երևակայության մեջ անգամ չտեղավորվող ողբերգություն: Ապրող ու շքանշանակիր հերոսներ կան, ովքեր իրենց ընկերների մարտական անունները գրելու են հիշողության չխամրող պատմությունների վրա: Կան ռազմագեորիներ՝ թշնամու դաժան հայացքի տակ պատասպարված: Նրանցից շատերը չեն ուզում սպանել Աստծո ողորմածությամբ տրված իրենց բաժին հույսը, սպասում են հրաշքի ու փրկության: Անհայտ ճակատագրերի այս քարտեզը իր մեջ ընդգրկում է նաև հերոսական կերպարներ:  
Նրանք դեռ կլիսեն...

\*\*\*

Այսօր առկա է և հեռակա պատերազմի ուրվականը, որը մեկ օր կարող է հայտնվել իր սև հանդերձանքով՝ արյան շեղբեր ձեռք ու ոտին: Պատերազմը դեռ չի սպառել իրեն, այն իր սուրը երկար կճոճի մեր երկրի գլխավորներում: Եռաբլուրը կմնա մեր աղոթատեղին...

\*\*\*

Կոխվել անսխալաբեղ էր իր ձևի ու բովանդակության մեջ: Արկը գտնում էր իր որսը հեռավոր տարածքներից: Կործանարար նրա կրակը երկնքից թափվում էր մահացու կարկտի պես, չկար օդը պաշտպանող կարևորագույն գրահը: Այն նման էր ծանոթ մարտաֆիլմերի, բայց գոհերի անունները իրական էին, և ո՛վ իմանա, թե քանի-քանի մահաշունչ հառաչանքներ երկինք բարձրացան՝ աղերսելով փրկությունն ու գուրջ Տիրոջ...  
Վստահ եմ, որ հեռացողների շուրթերին աղոթքի հետ եղել է նաև «Մայր» բառը:

\*\*\*

Նրանց հերոսացումները հուշարձաններ դարձան, որ քարերի երկիր Հայաստանում ոտնաձայների արձագանքները լսելի մնան, դառնան քայլերթ ապագայի համար:  
Չեմ ուզում անուններ նշել, շատ են աստղերի չափ, վախ ունեմ, որ ինչ-որ մեկին կմոռանամ հանկարծ, բայց կան դեպքեր, որ հավերժորեն դաջվեցին հիշողությանս պատերին որպես կտավի գունակար:

Օրինակ՝ զինվորը գրում է. «Մամ, այստեղ բոլորս այրուձեռք ենք: Հաղթում ենք մահին: Ուղղակի նայում ես ու տեսնում, որ կողքիդ չեն ընկերներդ, կյանքի հեղուկում են նրանք

շաղախված լինում, և հոգիդ լքում է մարմինդ»:  
Կամ՝ «Տագնապի պահին Հայկը արթնացել է, վերցրել էր օժանդակի շիշը և լցրել մյուս ընկերների վրա: Երբ հարցրել են՝ ինչ ես անում, պատասխանել է.  
- Վտանգավոր օր է, ինչ իմանաս, թե ինչ կլինի...  
Այո, վերջը սկիզբ դառնալու շատ պահեր ունի: Հերոսացումը երկրորդ կյանքի գրավականն է:  
Զինվոր Թաթուլը ասում է մորը. «Երբ մահանամ, ինձ երգ ու պարով կթաղեք»:  
Մի ուրիշ քաջորդի էլ Աստծուց աղոթածայն խնդրում է. «Տեր, թող ձեռքերս չվնասվեն, որ նորից դաշնամուր նվագել կարողանամ»:  
Մի ուրիշ դեպք. Աստվածաշունչը փրկում է քաջորդուն, և կրծքին սեղմած գիրքը պաշտպանում է նրան գնդակից:  
Երբ ծարավախեղ զինվորը իր բաժին շշով ծաղիկն է ջրում, ասել է թե՛ հավատում է, որ արկերը չեն կարող սպանել ապրելու հույսը, գեղեցիկը պիտի մնա:  
Կյանքերի կանաչ հունձք եղավ, կրակին գոհ գնացին հատկապես դեռ ծնողական գուրգուրանքի տակ մեծացող երիտասարդները, որոնք պիտի նարոտներ կապեին, սիրո պտուղի համը ճաշակեին:  
Մի զինվոր գրում է քրոջը. «Բեղերս եկել են, կնկարվեմ և կուղարկեմ քեզ», իսկ լուսանկարը տեղ է հասնում ուրիշի ձեռամբ՝ որպես միակն ու վերջինը...  
Հատկապես հուզական են սիրած աղջիկների սամակները: Նրանց խորքում պոեզիա կա: Կանանց միայնության ու ցավի կարոտը, մղձավանջային գիշերները դաժան կնիք ունեն, երբ քնքոնին դառնում է իր ընտանիքի նավավարը, քարտեզագրելով իրեն տրված նոր անցումները, իրականության բարդություններից մինչև փոթորիկ, տանում է իր հետ ծայրների բարդ ճակատագրերը, որ ապահով ու մայրաբար հասցնի ապահովության եզերք: Անմխիթար են տեսիլքային, անպարագիծ սպասումները, այտերի թացությունը, քույրերի կարոտանքների բեռները, հարազատների, յուրայինների մշտանորոգ ցավը:

\*\*\*

Գիտակցված վախճանը անմահություն է, ասվում է, բայց դժվար է անցնել այդ կեղևաններով, երբ կյանքերը գոհասեղանների մատաղացուներ են դառնում, և հավատալ այդ նետախոս ճշմարտությանը անիրատեսական է, երևակայական ժանրից է միայն:  
Մահվան ուրվականը միշտ էլ վախասփյուռ է:  
\*\*\*

Եթե վերծանենք մահ բառի հապավումը ըստ Աստվածաշնչի, կստացվի այսպես՝ մահ առանց հոգու, որը վերջակետի պես դրվում է կյանքի լուսանցքում, և մնում է սահման ու ավարտ:

Պատերազմ, պատերազմ, դու լույսերի գերեզման ես, և ընթացքդ մահաբեր է: Չեն մոռացվի այն օրերը, երբ հավատը բռնել էր հույսի ձեռքից և երկուսով քայլում էին մեր չարչարանաց երկրով: Զինվորը կյանքի ամեն մի պահը արժևորող աղոթք ուներ իր ներսում, որից այն կողմ անմահությունն էր ու անկշիռ հոգու թոփաբը: Հաղթանակը նրա նպատակի բուրգն էր, գագաթին՝ գանգի ներս կանչող դողանջը, ճակատագրային եռաթև խաչը:

Արցախյան գոյամարտը հաղթության խաղաթուղթ չունեցավ:  
Եռաբլուրը էլ տեղ չունի նոր անունների համար, կմնա ուխտատեղի ու խոնարհումի ու խնկաբույրի սրբավայր և դատապարտում, որ պատերազմի սպառնալիքին ասենք.  
- Ո՛չ, հազար անգամ ո՛չ:  
\*\*\*


Մեր ներսում դեռ երկար ռուբեր կպայթեն, հողի ճիչը կարձագանքի ժամանակի միջով, և 2020 թիվը կմնա ազգային աղետ՝ հուշելով, որ հեռացողների գերեզմանները երկնքում են, իրենց տիեզերական չափումների մեջ:

Հայրենիքը սկսվում է նրանց ճանապարհի ուխտով: Էպոսային իր ընթացքի ու ոգեկոչման մեջ է դյուցազնական Դավթի ոգին, վերարթնանում է ժամանակի միջով և մնում է արդիական:

Պատերազմը ընդդեմ սիրո է և հանուն հաղթանակի: Նրա առաջ ծավլում են թոփաբ թևերը, գահավիժում է վերից մինչև անդնդախոր ձորերի խորխորատը: Այնտեղ լույսերի սով է, ճակատագրերի մենամարտ, որտեղ փլատակների տակ է մնում երազը մահապարտի պես, և բաց աչքերը փակող չեն ունենում: Հավերժորեն բաց են, որ բիրերի տեսողության մեջ չմտնեն սիրելիների դեմքերը: Ման գունավոր ու նախնական:

Հազար ափսոս այն աղջիկներին, ովքեր սպասեցին իրենց կեսերին, և այդպես էլ նրանք չվերադարձան և ի ցավ չծնված հրեշտակ երեխաներին: Նրանց առաջին ճիչերը նոր կյանքի հրավերներ էին լինելու, բայց մնացին անհայտության մեջ՝ որպես ցավի օրորոցներ:

Արմատի վրա կրակ վառվեց, բայց վաղը այդ տաք մոխրակույտից կծնվեն



փյունիկ թռչուններ, որ երկինքը իր մթամածության մեջ՝ այդ թևաբախումներն էլ ունենա:

\*\*\*

Պայքարը պատկանելիություն չի ճանաչում: Պատերազմի բռնի զենք վերցրեցին եզդին ու քուրդը, ռուսն ու այլազգին, որ արդարության ու նվիրումի որդեգիրները մնան, անսասանության սյուները երկրի:

Հազար փառք, օրհնություն, խնկարկում ու աղոթք մեր աստղաճաճանչ հերոսներին և այն անուններին, որոնք հասու չեղան մեզ ու պիտի դեռ ծլարձակվեն՝ իրենց բաժին աշխարհը ծաղկուն պահելու համար: Անհայտության մեջ ապրող ամեն մի զինվորի կրած աղավաղող տղամարդկային պատվախնդրություն է և ուժ, արդեն կարևոր չեն շքանշաններն ու կոչումները:

Հազար փառք հերոսներին մեր:

Թող բանաստեղծությունս գնա, հասնի նրանց, որպես հիշատակի և նվիրումի ներբող ու շնորհակալության բարեմաղթանքի բացիկ, և ասի՝ փառաբանելի ճանփա բոլորիդ, իմ հերոսներ:

\*\*\*

**Թոռնահան տղերք,  
Պայծառաճակատ,  
Սրտիս արցունքը  
Հոսում է նորից  
Երակներիս մեջ՝  
Կարմիր է, աղի:  
Ավազաքարեր  
Նորից խառնվեց  
Ձեր ոսկեհատիկ  
Երագանքներին  
Եվ այն չի մաղվի:  
Երկինքը դարձավ  
Թաշկինակը իմ,  
Մութը և լույսը  
Խառնել եմ արդեն,  
Անքնությունը  
Շատ է անալի:  
Թոռնահան տղերք,  
Տաճար եք վերձիգ,  
Այն փակ դուռ ունի,  
Աղոթքս դարձավ  
Մուտքի բանալին:  
Ես կգամ շուտով՝  
Կիսելու ձեզ հետ  
Հողի կարոտը  
Խնկի բուրմունքով,  
Որ երկինք տարաք,  
Ինձ հետ կբերեմ  
Ծաղկասերմերը,  
Թող կարոտների  
Դաշտեր կանաչեն  
Սիրաբորբ ու տաք:  
Հուշերիս պահին  
Ամեն ծաղկաթերթ  
Վերից ցած նայող  
Կիսատ երագի  
Անձրև կլինի:**

**Թոռնահան տղերք,  
Ձեր անունները  
Ինձ հուռուրթ դարձան,  
Որ միշտ ես խմեմ  
Երբեք չսառչող  
Արցունքիս գինին...**



### Անուշ ԱՍԼԻԲԵԿՅԱՆ

Այսօր ես վաստակած (խաբուսիկ) ծերություն վայելելու ցանկություն ունեմ՝ տաք շալով փաթաթվելու, թեյ խմելու, ինձ թույլ տալու լուրեր չլսել, եվրոյի բարձրացող գնի ու նավթի արժեզրկվող գույնի մասին ոչինչ չիմանալու, մի քիչ ապրելու ու ոչինչ չանելու հրամայական, պահանջ, այսօր ակնոցս կորցնելու, կուրանալու, հողացավերից ցնորվելու ցանկություն ունեմ, որ չտեսնեմ մառախուղի պես արագորեն տարալուծվող Հայրենիքիս սահմանները:

Այսօր ես ունեցածիս մասին մոռանալու ու սրտխփոցով ընդհատված քնից վեր թռչելով՝ այն սարսափահար փնտրելու ու դարձյալ գտնելու ցանկություն ունեմ, գավակներիս ոչ թե խնամելու, ոչ թե խրատելու, այլ կողքի պատուհանից անվերջ դիտելու, հեռակա գրկելու, աչքերով նկարահանելու, ընդմիջտ հոգումս պահելու ցանկություն ունեմ նրանց մանկությունը, որ Ուրախությունն է հենց:

Ա՛յն, Հայրենիք, դու, որ հիմա բոլորովին անօգնական, խռով մի բլրում ես կույ եկել՝ արտասվաթոր մեխակներով ծածկված, անթիվ ուղղանկյունաձև սառը սալիկների ծնկների ծվարել, օգնություն ես հայցում հավերժորեն դաշված հերոսական լուռությունից, ինչպես կարողացար այսքան մեր սիրտը մխրձվել՝ ցավոտ ու կաթոզին, այսքան տրտում, բայց վճռական, այսքան արնոտ, բայց սիրուն: Հիմա ես ամեն օր ծերանալու, փախչելու, թաքնվելու ցանկություն ունեմ քո՝

# Հայրենիքս, Միակս, Ուրիշս

մանկան պես անպաշտպան հայացքից, բայց այսօր, հենց հիմա, առավել, քան երբևէ, քեզ կրծքով կերակրելու ու բարուրելու պարտք ունեմ: Թող տղաներին իրենց Եռաբլրում՝ շահած խաղաղության հետ, անուշս, թող նրանց ետևից Ծիր կաթինի պես ծորացող նրանց մայրերի միլիոնավոր բեկորների վերածված սրտերը, որբերի արցունքները, որ պետերբուրգյան ու լոնդոնյան դժգույն անձրևներից էլ հորդառատ են:

Դուրս եկ ապագայի համար տենդագին մաքառող հայրերի անտակ խորշումներից, թող ու եկ ինձ մոտ, ձագուկ, ես գավակներ խնամելու մեծ փորձ ունեմ, նրանք իմ քնքշանքի ներքո մոզեր ու մարգարեններ են դառնում, նախշուն հավքեր ու եղեմական ծաղիկներ, նրանք իմ համբույրներից հսկաներ ու աստվածներ են դառնում, օվկիանոսներ ու աստղեր, տաճարներ ու վանքեր:

Ա՛յն... Հայրենիք, տո՛ր ինձ քո մայրը լինելու սուրբ իրավունքը, և ես քեզ կհամբուրեմ հենց այնպես, ինչպես իմ գավակներին, որ սիրել գիտեն, որ գիտեն Երկնային Ապարանքը կառուցելու բոլոր գաղտնիքները, որ ն երել ու երգել գիտեն, այսօր օրը պոեզիա է բուրում:

Եվ ես, որ սիրում եմ բեմի վարագույրի հետևում դիմակների հետ պար բռնել, այսօր ներծծված եմ պոեզիայով, այն մեկով, որ քո մասին շատ բան գիտի, նա տեսել է, շոյել է քո բոլոր վերքերը՝ 88-ին, 92-ին, 16-ին, 20-20-ին բացված:

Նա գիտի դրանից առաջ էլ բացված քո վերքերի մասին, բայց չի տեսել, այլ շոշափել է դրանց սպիները՝ լացելով, մտքում մահանալով, աղոթելով,

ոտքի կանգնելով, մայր դառնալով:

Նա գիտի հողի, Տիեզերքի, ջրի ու արյան կանչի մասին շատ բաներ:

Այսօր հեռավոր Կրեֆելդում փոքրիկ մի աղջիկ անտրտունս հեռացավ երկինք, ու նրա խեղճ հայ ծնողները շփոթված են, նրանք չգիտեն՝ մոխրացնել ու օվկիանոսի՞ն հանձնել, թե՛ փայտյա արկղիկով օտար հողին պահ տալ այն հայուկի մարմինը, որին կտրել էին իր արմատից, քեզնից, քո սպիներով ու վերքերով պատված հողից, Հայրենիք, որ ամենատաքն ես:

Երեկ հայր ու որդի՝ անհասկանալի, անսպասելի, անըմբռնելի հանգամանքներում՝ գազանի ձեռքն ընկան, զենքի ուժով գետնին տապալված՝ հանկարծ հողից բարձրացող տաք ու գիրգ՝ իրենց Հայրենիքի հոտն առան, որտեղի՞ց, ինչպե՛ս, նրանք չիմացան, բայց երբ նայեցին միմյանց, նույն բանն ասացին ու իրար հասկացան, ինչ լեզվով, ինչպե՛ս, ինչնու, չգիտեմ, բայց դանդաղ ու վստահ հավեցին իրար մարմիններով:

Ո՛չ թե մահվան վախից, այլ քո բույրի մեջ պարուրվելու երանությունն իրար հետ կիսելու խենթացնող երջանկությամբ՝ հաշտված մահվան հետ, և հենց այդ պահին եղավ աններելին, ու հենց այդ պահին Տիեզերքը զգաց քո հրամայականը, Հայրենիք, Նա հասկացավ, որ զենքն անգոր է, երբ մարմինդ հավիտենականին է հավում:

Տո՛ր ինձ քո մայրը լինելու սրբազան իրավունքը, Հզորս, ու ես քո ոտքերի առաջ մարգարիտներ ու հակինթներ կդառնամ, մայրական կենարար կաթի պես քեզ ամեն բուրբ կաթիլ առ կաթիլ սնելով՝ դարձյալ Հսկա կդարձնեմ, Հայրենիքս, Միակս, Ուրիշս:



Տիգրան Արտաշեսի ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻ-ՔՍ

Մեղքդ հույզերի անմահությունն էր... Կյանքդ՝ խելահեղ խայտանքը նրա, Միտքդ միշտ խղճի թարգմանությունն էր... Խելատ պողոթյունդ՝ երդումը նրա:

Վիշտդ ճշտության անճարությունն էր... Արդարությունը՝ հավանող չքնաղ, Իղճդ երազի խաղաղությունն էր... Սնքած թախիծդ՝ հեքիաթը նրա:

Հույսդ անընդհատ՝ Աստծուն մերվելն էր, Համբերությունդ՝ հանճարիդ վկան, Ճշմարտությունդ լույս-մոլորությունն էր... Տվայտանքներդ՝ պսակը նրա:

Պայքարդ հոգու ազատությունն էր, Պարտություններդ՝ սրբի ինքնություն. Արհամարհանքդ՝ ներման աղերսն էր... Զգվանքդ՝ քենի ողորմածություն:

Ատելությունդ սեթևեթանքն էր... Հեզանքդ՝ խոնկք կատարելության, Հոգսդ կասկածի՝ հավերժությունն էր... Մերդ՝ հրանշքը հավիտենության...

Ազնուկն աշխարհի թո լուրջությունն էր, Անճառ ցատունդ՝ երկրնքը նրա... Ցանկն անհունի իմաստությունն էր, Իսկ տառապանքդ՝ պարծանքը նրա...

ԵԿ ՈՒ... ՀԱՎԱՏԱ

Իմ պատանեկան տենչանքներ վսեմ Ու տղայական առաքինության Անճնուրաց հողմեր...

Աշխարհում ոչինչ Դուք չփոխեցիք. Լուկ փշուր-փշուր անելով Փխրուն իմ էությունը՝ Ինձ կորուստներին գերին դարձրիք...

Որ ունեցածս անդարձ կորցրած Մի անբուժելի ցավագարի պես՝ Այժմ պատրանքներ կարկատանելով՝ Ինձ պիտի իբրև կոչեմ բանաստեղծ...

Իսկ իմ խենթօրոր դիմացկունությանն Անվանեմ ես կյանք...

...Հինա թվում է, Թե միլիոն տարի առաջ է եղել, Երբ խենթ պատանին Քեզնից թոցրած մի սուտ թաշկինակ Բարձի երեսի շոր է դարձրել

Եվ խոստումնալի բուրմունքից արբած՝ Այնպես է շշմել հուզիչ մի գիշեր... Որ թերահավատ գրվալը նրա Անմահությանը հավասարագոր Մի եղենական քուն է պաշարել...

Ու եթե հիմա, Համայն աշխարհի տիկնանց հետ մեկտեղ Գլուխ գլխի տան Բուրաստաններն էլ բոլոր դարերի՝ Չեն կարող, Երբեք, Ո՛չ մի հնարքով, Վերծանել բնյրն այն լույս-թաշկինակի, Որի վրա ես, Իմ սենտիմենտալ գլուխը դրած, Քնել եմ մուշ-մուշ...

Իսկ առավոտյան Արթնացել այնպես վեհ ու շփոթված՝ Ասես՝ այդ գիշեր Ի լուր ամենքի՝ Ինձ կարգել էին մի նոր տիրակալ, Որ խնամարկեմ... Ո՛ղջ տիեզերքին:

ՏԱՌ-ԱՊՂԱՆ-ՔԸ ԶԻ ԱՄՈՔՎՈՒՄ

Ո՛րերորդ անգամ Ես համոզվում եմ, Որ ցավ սփոփող Ամեն խոսք բույժ է... Ու վիշտ փարատող Ամեն միտք ու խոհ Մոսկ պարկեշտ սուտ է...

ԳՈՐԻՍՅԱՆ ԷՏՅՈՒԴ

Մայրամուտի մեջ մեր սեզ լեռներն են Թավշյա գնդուխտով գուգված փայլվում... Գարնան ծաղկունքով գերված հավքերն են Այգիների մեջ անվերջ կլվում...

Իրիկնամուտի գրգանքների տակ Քաղաքն է կրկին սիրով պարուրվում... Անձայր երկնքի գրկում կապուտակ Մեր արծիվներն են հանդարտ պտտվում...

Սարավանդներից մեր գանգրագիսակ Անտանն է նորից մարդկանց հմայում... Չքնաղ բուրգի պես՝ հսկայահասակ, Լաստ սայրն է եկող դարերին նայում...

Քնքուշ բույրերով լցված քաղաքն է Կարոտներով լի թախածի մեջ խորհում... Ու մեր պապերի անմահ ոգին է Ցից-ցից ծայրերի ծոցի մեջ նիքում...

ԱՊՈՍՏՈՒԹՅՈՒՆ

Նվիրում եմ որդուս՝ Վարդան Գրիգորյանին

Դարձած հույզերիս անվախճանությանը Զմայված գալիք՝ Այս մահախուճայ, Լիրբ ու նողկալի մեղանչումներից Ասես համբարձված,

Բայց և որպես մի խղճի ուրվական՝ Հավերժ կենդանի, Ես ինքս ինձ եմ շարունակելով Ապշահարի պես հաճախ հարց տալիս. «Ինչպե՞ս ես ապրել, Իմ հրանշք հայրիկ... Երբ քո բերանով՝ Անդարմանելի տարակուսանքով, Անհունն է խոսում տիեզերական... Մշտնջենական տառապանքից իր՝ Հավիտենական ցավից լուրջան»:

Ինչպե՞ս եմ ապրել... Մի բազմադարյան, Տարագրակյաց պատմություն է դա՝ Սկսված նորելով ու խոստումնալից Այն նախապահից, Երբ երանավետ քաղցրությունը ես Խավարահաված լույսի զգացի... Որ կարոտաբաղձ ոգորումներով Շարունակվում է դեռ մինչև այսօր, Երբ վաղուց է, ինչ ես գերմարդացել, Բայց քաղցրությունն այդ փոքրիկ հրաշքի Չեմ կարողանում խաղաղված սրտով Հանգիստ ճաշակել...

Իսկ եթե ասել այսօրվա լեզվով՝ Ես աշխատել եմ, Ինչ էլ որ լինի՝ Չհիվանդանալ իմ դարի ախտով. Նույնիսկ՝ մահանալ, Բայց քաղաքակիրթ խաբկանք չդառնալ:

Այս իմ նորագույն ախտազերծության Հին վկաններն են Բոլոր տեսակի ապրող մահերը Խաչված կյանքերի նույն իմ պատմության... Հավատագրկման բեռան տակ կքած Արևաքայլերն այն խեղճ սրբերի, Որոնք ապրել են մոգական կյանքով Առեղծվածային հանելուկների... Միապետասեր ժամանակների Անապատածին կախաղաններից Զղածգվելով ճոճվելին անգամ՝ Կույր ծլարձակման Կուսականության ճշան հավատը Գեթ մահվան պատրաստ խելահեղությանը Կանաչապատել՝ Ու նույնիսկ հոգու ավանդման պահին Իրենց էության ճշմարտությունից Չեն հրաժարվել...

Եվ անկախաղան, խրոնիկացած Իմ այս ճոճվելը վկայակոչեմ, Որ կարելի էր խոր հառաչելով, Ըստ ավանդույթի՝ Նաև կյանք կոչել... Իսկ ավելի գուսպ համեմատությանը՝ Տրտմաթախձալի, Պահաճոյացած կերպ կենդանության...

Ու ես, փոքրիկս, Այս անտանելի գոյության անլուր Տվայտանքների արանքում շշմած, Շվարած կյանքից... Զգված ինձ կանչող բոլոր կեղծարար Գոռ աշխարհների հրավերքներից՝ Ես՝ Արդարության Նորին Բացարձակ Նորեն ձայնողակ Մոլագայրս Խենթ, Ճանաչավորված միայն ու միայն Աստծո անդրանիկ, Հար հրաշագոր տեսքով երկնաճեմ... Արևի նման համայնատարած Հավասարություն ճշտված անվերջ

Ու ճապաղելով՝ Դեպի ներկայի արգանդում հունցվող Իմ սիրամուրճ ու սիրատոչոր, Ցնդած Գերմանրդը ինձ կարկատեցի...

Ու կրակ կտրած ձայնալարերս Արցունքոտվելով Այնքան ժամանակ թեժ թրթռացին, Մինչև որ՝ հոգնած, Խեղանդամվելով, Չհանդիպեցին Արցունքամմանն արե պատնեշին՝ Ի վերնստ ձողկված Կաղկանձման ցավին...

...Հենց այստեղից էլ՝ Ես մահաթաքույց, Բնաստրկային հիասթափության Մուր ցավս զգացի. Տեսա, թե ինչպես Ես՝ աննպատակ, Ասես դառնում եմ ձմե՛ռ անհատակ... Քանի որ արդեն սկսեցի ես իմ Ինքնաբույս ու խոլ եղանակների Երբեմնի սրանց հիման տիրոջից Շատ խորը զգալ. Վերջնականապես ջղաթափ եղած Ծերունու նման:

Բայց ծերունու պես ես չսստեցի Եվ պարապորեն, Միտքս հարահոս կյանքի հրաշքին՝ Էլ չսկսեցի Անցած օրերիս կորուստը սգալ... Այլ այս փակուղում Ես այն հասարակ, Պարզ մի՛տքը գտա, Որ լոկ լեռներն են, Եվ այն էլ՝ հսկա, Չմեռ թե գարուն, ամառ թե աշուն «Ձմե՛ռ է... Ձմե՛ռ...» անվերջ մտորում...

Թեև բաշերի տարուբերումով Ի ցույց են անում մեծահոգաբարձ Ի հույս դաշտերի, Թե իրենք էլ են իբրև մասնակցում Խրախճանքների Այս հեքիաթային սուտասանների...

Փակուղիս բացվեց, Բայց... Մակայն... Ավանդ... Նման տխրունայն մի ողբերգության Շարունակական արարողության...

Ես էլ, փոքրիկս, ճարահատորեն, Կամ էլ՝ ճիշտ է թե՛ Ողորմածաբար, Այս ժուժկալահար իմ ժամանակի Բեմահարթակից, Անպատկառ վարք ու բարքից մոլեգնած, Անչափ հանճարեղ Մեծ դերասանին դերը ճանկեցի:

Իսկ թե մոլորված՝ Հակասականի խորխորատներում, Դու շփոթվելով Ինձ ճշտես այսպես՝ Իբրև՝ ես լեռ եմ... – Կանգ առ,– քեզ կասեմ,– Թե ճշտել է պետք՝ Թող ճշտենք այսպես. Հասարակածում ցցված բևեռ եմ...





IN MEMORIA IN MEMORIA IN MEMORIA IN MEMORIA IN MEMORIA IN MEMORIA IN MEMORIA IN MEMORIA



Հունվարի 16-ին Գլենդելում վախճանվեց գրականագետ, հրապարակախոս, արվեստագետ, հրապարակախոս, արվեստագետ, հրապարակախոս, արվեստագետ...

Սրբելի Ալեքսանդր, Ուշացումով իմացայ եղբորդ՝ Ստեփանի մահը: Նա ամբողջ սերնդի եւ կենսագիրն էր, եւ գրական շարժման ուղղորդողներից մէկը, որ որոշակի փոփոխություններ բերեց մեր գրական ընթացումներում...

Սրբելի Ալեքսանդր, Ուշացումով իմացայ եղբորդ՝ Ստեփանի մահը: Նա ամբողջ սերնդի եւ կենսագիրն էր, եւ գրական շարժման ուղղորդողներից մէկը...

Հատված «ԿԱՐԻՃԻ ՏԱՐԻ» հրապարակախոսական հոդվածների ժողովածուից (Երևան, 2016)

...Լոս Անջելես ոտք դնելուց մոտ երեք ամիս հետո, 1994-ի մարտին, «Բլեյնթոնիոսի հարցումը» (Հակոբ Պարոնյանը միշտ մեզ հետ է) հոդվածն արժանացավ «Ասպարեզ»:

(Նիշե՛ք Նար-Դոսիս, Գր. Զոհրապին, Երուխանին տրուած գնահատությունները) առանց երկնչելու, ծառանալով «վաստակաւոր» գիտնականների այդօրինակ հնացած ժառանգութեան դէմ:

- Գնա՛, գնա՛, չեմ տալու,- ասում էր և մեկնում,- տեն, վերջին անգամ, էլ չգնա: Եվ այսպէս շարունակ: Աշակերտել էր Լեոն Ծանթին ու Նիկոլ Աղբալյանին, բարեկամացել նրանց հետ: Հուշերի հետաքրքիր գիրք հրատարակեց, նրանց ու նաև Գասպար Իփեկյանի, Ժորժ Սարգիսյանի, Բարսեղ Կանայանի, այդ տարիների հայ մշակութային կյանքի մասին: «Ստեղծության մեջ վերապրումներ» վերնագրով այդ հուշագրությունը գրախոսեցի հաճությամբ: Մեջբերեմ մի հատված՝ ընդգծելու, թե դասական դպրոց անցած, գրական պարզ մշակ թվացող անհատներն անգամ ինչ անփոխարինելի արժեք են մեր մշակույթի համար:

սկզբին պաշտպանում էի «հեթանոսական» գրական շարժման մասին թեկնածուական աշխատանքս: Ընդդիմախոսն էր և ծանապարհ հարթեց կնճռոտ բանավեճերի ընթացքին: Նա հաւատում էր մարդուն ու մարդու մէջ՝ գիտնականին: Ըստ էութեան՝ ինձ համար գիտական եղբայր էր: Սրբելի Ալեքսանդր, Ես հիմա քո կողքին եմ, եղբայրաբար սգում եմ եղբորդ մահը ու մխիթարում նրա անցած ծանապարհի մեծությունը:

Քո Սուրեն ԴԱՆԻԷԼԵԱՆ

«Ինչո՞ւ չի գրում»: Էլ չխոսենք անթիվ ու անհամար այն «ինաստունների» մասին, որոնք, այրն ու բենը կարգին գանազանել չկարողանալով իսկ, իրենց անհասանելի բարձրությունից քեզ դատեր են տալիս մտքի ցանկացած բնագավառի «գիտունությամբ», վերջում էլ հաղթական ամփոփում: - Մենք մտավորականություն չունենք... Կամ էլ, արհամարհանքով՝ - Ինչի՞ եք գրում, դրանով ինչ պիտի փոխեք: - Գրելագավով չենք տառապում, ստիպված ենք, մասնագիտություն է: Ինչեր ասես չպատահեցին և դեռ կպատահեն անհավասար այդ պայքարում: Ու՛մ գլխին ինչ հարված կգա և ինչո՞ւ՝ դժվար է կռահել: Ազգին անշահախնդիր ծառայող անհատը, խումբը, կազմակերպությունը, կուսակցությունը կարող է հայտարարվել ազգի թշնամի, իսկ բուն ներքին թշնամին ընդունվել մեծ հայրենասերի լուսապակով: «Արցախը չհանձնենք՝ վատ կապրենք», «Մեղրին ծախսեցին՝ փողը գրպանները դրեցին», «Լարաբաղիցները կերան, կործանեցին Հայաստանը», «Հարևանների հետ բարեկամություն անենք, բանակը կրճատենք», «Պայքար, պայքար, մինչև... Հաազա», «Մարտի 1-ի միջազգային հետաքննություն», «Ծավված մտավորականներ» և այլն: Բայց անվերջանալի «պայքարից» վերադառնալով մեր խմբագրություն: Մի շրջանում Ժան Գոսակյանի դեմ գաղափարական (թեև գաղափար չունենին, հիմա էլ չունեն) հակառակորդների երգիծական (չակերտ չեմ դնում, թեև արժանի է) արշավանք սկսվեց: Ժանը, նստած իր սենյակում, կարդում ու քահ-քահ ծիծաղում է: - Ժան, բայց անարդար բաներ են գրում... - Սպասի՛ր, քո մասին էլ են գրել, սահա՛... Նորից կարդում է, միասին ենք ծիծաղում: Բայց ինձ երգիծողին ես նախապես ինչպես հարկն է քննադատել եմ, հատկապես Արցախը հանձնելու իր քարոզների համար: Ուրեմն մարդը երգիծելու պատճառ ունի: Իսկ Ժանը մյուսներին ինչ է արել, թվում է՝ անգամ հակառակորդները համակրում են նրան: Բայց քանի որ խմբագիր է, հավանորեն, բոլորիս արած-չարածների համար նրանից են դի հանում: Ժան Գոսակյանին փոխարինում է Վաչե Բրուտյանը: Եթե Ժանին կարելի էր այցելել ցանկացած պահի, Վաչեն լարվում է. եթե նույնիսկ կես

